
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԵՐԵՆ

(Հրաչյա Քոչարի «Նահապետ» վիպակը)

ԶՈԹՅԱՆ-ԿՐԱՅՉԻՐ Պ. (Հունգարիա, ք. Բուդապեշտ)

Օտարալեզու գրականության՝ հունգարերեն թարգմանության փորձը և տեսությունն ունեն մի քա նի հարյուրամյակների պատմություն: Հունգարերենը օտար էր եվրոպական լեզուների շրջապատում, իսկ մշակութային առումով զիջում էր ավելի զարգացած արևմտաեվրոպական մշակույթներին: Եվ զարմանալի չէ, որ հունգար գրականագետները, սեփական մշակույթը հարստացնելու նպատակով, հաճախ էին դիմում արևմտյան գրականության նմուշներին: Հունգար թարգմանիչների ուշադրությունը XIX դարում առաջին հերթին ուղղված էր դեպի Արևմտյան Եվրոպայի գրականությունը: Հունգար թարգմանիչներն ավելի քիչ ծանոթ, ավելի փոքր ու հեռու գտնվող ժողովուրդների գրականությամբ սկսեցին հիմնականում զբաղվել միայն XX դարից: Հայ գրականությունը լեզվի, տարածական և ժամանակային առումներով պատկանում էր հունգարականից հեռու և անծանոթ մշակույթներին: Հազարամյակների պատմություն ունեցող և չափազանց հարուստ հայ գրականությունը երկար ժամանակ անծանոթ էր մնում հունգար գրականագետներին, ինչը կարելի է բացատրել Հայաստանի՝ Հունգարիայից մեկուսացված լինելու փաստով՝ ինչպես աշխարհագրական, այնպես էլ հասարակական-քաղաքական առումով:

Հայ գրականությունից թարգմանություններ անելու անհրաժեշտությունն առաջանում է Տրանսիլվանիայի հայ գաղութում, XIX դ. վերջին: Դա համընկավ այդ ժամանակաշրջանում արդեն վերջնական ձուլման եզրին կանգնած հայ համայնքի՝ ազգային ինքնությունը վերականգնելու, պաշտպանելու և մայր Հայաստանի հետ հոգևոր կապերը նորոգելու ձգտումների հետ: «Արմենիա» ամսագրի (1887-1907) էջերում հունգարերեն թարգմանությամբ լույս տեսան հայ գրականության նշանավոր ներկայացուցիչների՝ Մ. Պեշիկթաշյանի (1887), Խ. Աբովյանի (1891), Հովհ. Հովհաննիսյանի (1892), Ա. Ծատուրյանի (1893), Պ. Դուրյանի (1893), Մ. Նալբանդյանի (1896), Բաֆֆու (1898), Սայաթ-Նովայի (1900) և այլոց ստեղծագործությունները: Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Հունգարիայի հայ համայնքին հաջողվեց հունգարերեն թարգմանությամբ լույս ընծայել հայ գրականության ևս մի քանի նմուշներ: Այդ թարգմանությունները, սակայն, բավական հազվադեպ էին, մեկուսի և փոքր տպաքանակով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայ գրականությունը մեծ մասամբ ռուսերենի միջնորդությամբ թարգմանվեց հունգարերեն: Առաջին հերթին տպագրվեցին հայ քնարերգության նմուշները, որոնք լույս տեսան խորհրդային ժողովուրդների քնարերգության հավաքածուների շրջանակներում: Դրանք էին՝ «*A vngtelensng szomja*» («Անվերջության ծարավը») (1977), «*Ablak a tavaszi tnrre*» («Լուսամուտ գարնան

հրապարակի վրա» (1975), «*Csillagok graja*» («Աստղերի ժամը») (1980), «*Aranykert*» («Ոսկե այգի») (1982): Մի քանի հայ մեծ բանաստեղծների երկերը՝ Հովհաննես Թումանյան (1969), Ավետիք Իսահակյան (1975), Գևորգ Էմին (1983), Եղիշե Չարենց (1986) լույս տեսան առանձին հատորներով: Արժե նշել, որ այս բանաստեղծների ստեղծագործությունների թարգմանությունները կատարել են XX դ. լավագույն հունգար բանաստեղծները՝ Շանդոր Վյորյոշը, Դեժո Տանդորին, Ժուժա Ռաբը, Գեզա Կեպեշը, Աննա Բեդեն:

Ռուսերենից թարգմանվել և ժողովածուների ձևով հրատարակվել են նաև հայկական ժողովրդական հեքիաթներ՝ «*Elvarnzolt madarak*» («Կախարդված թռչուններ») (1961), հայ ժամանակակից դրամաներից՝ «*A legszomorObb ember*» (Պ. Զեյթունցյան «Ամենատխուր մարդը») (1982), Վ. Պետրոսյանի և Հ. Մաթևոսյանի երկերից:

1990-ականի սկզբին Հունգարիայում տեղի ունեցած պետական-հասարակական արմատական վերափոխումների հետևանքով, մեծ թվով պարբերականների տպագրությունը դադարեց: Դրանց մեջ էր նաև «*Szovjet Irodalom*» («Սովետական գրականություն») ամսագիրը, որի 1986 թ. 6-րդ համարը լիովին նվիրված էր հայ գրականությանը:

Վերջին մեկ ու կես տասնամյակի ընթացքում հայ գրականության՝ հունգարերեն ամենանշանակալի թարգմանությունն է «Հայկի և Բելի պայքարը» գրական անթոլոգիան, որը կազմել է հայտնի հունգար հայա-գետ Էդմոնդ Շյուցը. այստեղ զետեղված է հայ գրական գոհարների ընտրանին՝ ամենավաղ ժամանակներից մինչև XVIII դարը:

Հայ գրականության հունգարերեն թարգմանությունների մեջ հայ բանահյուսության նյութերը զգալիորեն գերակշռում են գեղարվեստական արձակի թարգմանություններին: Վերջիններս հիմնականում XX դ. հայ գրողների պատմվածքներ և վիպակներ են: Ցավոք, հունգար ընթերցողին դեռ անձանոթ են մնում հայ մեծ գրողներից շատերի ծավալուն ստեղծագործությունները: Այդ գրողների կենսագրություններին և հիմնական աշխատությունների թվարկմանը հունգարացին կարող է ծանոթանալ Հունգարիայում լույս տեսած «Համաշխարհային գրականություն» կամ «Մեծ Հունգարական» հանրագիտարաններում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հունգարերեն թարգմանված ամբողջ հայ գրականությունը կարելի է գրապահարանի մեկ դարակի վրա տեղավորել, պարզ է դառնում ամեն մի նոր այդպիսի թարգմանության կարևորությունը:

Մինչև Հ. Քոչարի «Նահապետ» վիպակի թարգմանությանն անդրադառնալը արժե նշել թարգմանչական արվեստին առնչվող մի քանի կարևոր տեսական դրույթներ: 1) Թարգմանիչը պետք է լավ իմանա ոչ միայն թարգմանվող ստեղծագործության լեզուն, այլև տվյալ բնագավառի մշակույթը, գրականությունը, պատմությունը, այդ լեզվով խոսող և այդ տարածքում ապրող մարդկանց մտածելակերպը: 2) Անհրաժեշտ է, որ թարգմանիչը քաջ ծանոթ լինի համաշխարհային գրականությանը, ինչը կօգնի ճիշտ ընտրելու թարգմանությանն արժանի ստեղծագործություն: Ստեղծագործության իսկական արժանիքները ի հայտ են գալիս առավելապես հենց թարգմանության ընթացքում: 3) Թարգմանիչը պետք է

հրաշալի տիրապետի մայրենի լեզվին, իմանա հին ու նոր գրականությունը, լեզվի հին ու նոր շերտերը: 4) Թարգմանվող ստեղծագործությունը թարգմանիչը նորից պետք է վերստեղծի՝ արդեն մեկ այլ լեզվական միջավայրում: Այդ գործընթացի միայն առաջին քայլն է ստեղծագործության ճշգրիտ վերարտադրումը: Թարգմանիչը պիտի վերապրի ստեղծագործության ամեն մի դրվագ, ամեն մի տրամադրություն և այնպես վերարտադրի սեփական լեզվի միջոցով, որ թարգմանությունը ճիշտ արտահայտի այդ տրամադրությունը, ստեղծագործության իմաստն ու խորհուրդը: 5) Լավ թարգմանված ստեղծագործությունը ոչ միայն արտաքին, այլև խորին շերտերում էլ պետք է համընկնի բնագրին: Թարգմանությունը ընթերցողին պետք է հնարավորություն տա վերապրել նույն զգացմունքները, որոնք կարող էր ունենալ բնագրի լեզվով ընթերցելիս:

Հրաչյա Քոչարի «Նահապետ» վիպակի թարգմանչուհին՝ Պիրոշկա Զոթյան Կրայչիրը, ավարտել է Բուդապեշտի համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ հունգարերենի և ֆրանսերենի մասնագիտություններով: Լինելով իր մայրենի՝ հունգարերեն լեզվի մասնագետ, միաժամանակ լավ գիտակ է համաշխարհային գրականությանը: Նա համալսարանական տարիներից հետաքրքրվել է թարգմանչական աշխատանքի առանձնահատկություններով: Այդ թեմային նվիրված մի շարք հոդվածներ է տպագրել: Իր մասնագիտականի՝ հունգարերենի և ֆրանսերենի հետ մեկտեղ ուսումնասիրել է մի շարք այլ լեզուներ՝ լատիներեն, ֆիններեն, իսպաներեն, ճապոներեն, անգլերեն: Հայոց լեզուն դեռևս ուսանողական տարիներին է սկսել ուսումնասիրել հայտնի հունգար հայագետ Էդմոնդ Շյուցի մոտ, Բուդապեշտում: Թարգմանչուհին հետագայում ավելի է կատարելագործել հայերենը, Հայաստանում բնակվելու ժամանակ, երբ իր գիտելիքներն էր խորացնում հայ պատմության, մշակույթի և ազգագրության ասպարեզներում:

Թարգմանչական գործում շատ ցանկալի է, որ թարգմանիչը ինքն էլ ստեղծագործող լինի: Պիրոշկա Զոթյան Կրայչիրը վերջին մեկ և կես տասնամյակի ընթացքում բազմաթիվ հոդվածներ է գրել՝ նվիրված Տրանսիլվանիայի հայ գաղութի պատմությանն ու ազգագրությանը, նաև մեծ թվով հրապարակախոսական բնույթի աշխատություններ է տպագրել հայաստանյան ու հունգարական մամուլում:

«Նահապետ» վիպակի թարգմանության դրդապատճառը եղել է այն տպավորությունը, որ թարգմանչուհին ստացել է Հենրիկ Մալյանի համանուն կինոնկարից: Ըստ երևույթին, այդ ընտրությունը պատահական չէր, եթե հաշվի առնենք, որ այդ ստեղծագործությունը Հրաչյա Քոչարի ամենակարևոր ու ամենասիրելի ստեղծագործություններից էր, որով հեղինակը երկար ժամանակ է զբաղվել իր ստեղծագործական կյանքի ընթացքում: Այս ստեղծագործությունը բարձր է գնահատել հայ ընթերցողը ինչպես մայր Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Պատահական չէ, որ հեղինակն այդ վիպակի համար 1966 թ. արժանացել է Հայաստանի պետական մրցանակի: Վիպակը թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով, և հավանաբար արդեն ժամանակն էր, որ այն թարգմանվեր հունգարերեն ու հասանելի դառնար նաև հունգար ընթերցողին: Դա կարևոր է, որովհետև այն բացառիկ ճշտությամբ արտացոլում է հայ մարդու և հայ նահապետական հասարակության հոգևոր արժեքներն ու հայ մարդ-

կանց՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունները: Մյուս կողմից՝ վիպակի ամբողջ հյուսվածքով անցնում է 1915 թ. ցեղասպանության թեման: Հունգարալեզու գրականության մեջ Մեծ եղեռնի թեման արտացոլված էր գլխավորապես Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում: Թարգմանչուհին հատկապես իմաստավորել է այն, որ այլ ազգերին հայ ժողովրդի ողբերգությանը ծանոթացնելու կարևորագույն միջոցներից է մի հասարակ հայ մարդու ճակատագրի պատկերումը՝ այդ ողբերգությունն ու դրա հետևանքները բացահայտելու ճանապարհով:

Պիրոշկա Ջոթյան Կրայչիքը լավ է ճանաչում հայ մարդկանց, նրանց սովորույթներն ու հարաբերությունների գրված ու չգրված օրենքները: Այդ ամենն իմանալով հանդերձ՝ բավական դժվար էր «Նահապետում» բերված երկխոսությունների թարգմանությունը, քանզի հիմնական երկխոսությունները Վանի բարբառով են:

Կարծիք կա, որ արձակն ավելի հեշտ է թարգմանել, քան քնարերգությունը, քանի որ այդ պարագայում թարգմանիչը հատուկ ուշադրություն չի դարձնում թարգմանության մեջ ոտանավորին հատուկ ռիթմիկայի պահպանությանը: Սակայն, երբ թարգմանվող բնագրում հերոսները խոսում են բարբառով, հարց է առաջանում, թե ինչպե՞ս է պետք հունգարերեն թարգմանել նրանց երկխոսությունը, որպեսզի պահպանվեն բնագրի ոճն ու գեղեցկությունը: Թարգմանիչը չէր կարող օգտագործել հունգարերենի՝ իրեն քաջ հայտնի բարբառները, սակայն պետք է թարգմանության մեջ արտացոլեր Նահապետի ու մյուս հերոսների լեզվի հնաբույր ոճը: Այս խնդրի լուծման համար թարգմանչուհին դիմում է այն հնամենի ոճին, որով հունգարերեն է թարգմանվել Աստվածաշունչը: Հայ բնագրի բարբառը արտացոլելու համար թարգմանչուհին օգտագործել է հունգարերենի հարուստ բառապաշարը՝ հատուկ ընգծելով բնագրի քնարերգականությունը:

Հետաքրքրական է, որ հունգարերենը, չնայած պատկանում է լեզուների ուգրո-ֆիննական ընտանիքին, որոշ առումով, մանավանդ նախադասության կառուցվածքով, մոտ է կանգնած հայերենին: Հայերենում՝ նրան առանձնահատուկ լեզվամտածողությամբ, սիրո և համակրանքի արտահայտման բազմաթիվ ձևեր գոյություն ունեն, որ հունգարերենում բացակայում են կամ էլ չունեն համարժեքը: Դրանցից են՝ «մատաղ լինեմ քեզ», «ցավդ տանեմ», «մեռնեմ քեզ» և այլն: «Մեռնեմ»-ով սկսվող բառակապակցություն գոյություն է ունեցել հին հունգարերենում: Մյուս նման արտահայտությունները թարգմանության մեջ անհրաժեշտ էր փոխարինել այլ՝ սեր ու համակրանք արտահայտող հունգարական արտահայտություններով:

Վիպակը պատկերում է մի այնպիսի աշխարհ, որտեղ մարդու ճակատագիրը մեծապես կախված է նահապետական հասարակության մեջ ապրող մարդկանց հարաբերություններից: Այդ հարաբերությունները հայերենը շատ ավելի ճշգրիտ է արտահայտում, քան հունգարերենը: Նահապետի լեզուն լի է բառերով և դարձվածքներով, որոնք կապված են հայ հարուստ ազգագրության հետ, բայց կարող են անհասկանալի և օտար լինել հունգար ընթերցողի համար: Վերջինիս հայոց ճոխ լեզուն

ավելի հասկանալի դարձնելու նպատակով թարգմանչուհին այդ կարգի բառերի կամ դարձվածքների բացատրությունները, ի տարբերություն վիպակի ռուսերեն թարգմանության (որտեղ դրանք տրվում են համապատասխան էջերում), տալիս է գրքի վերջում բերված հավելվածում: Թարգմանության այդպիսի կառուցվածքով, թարգմանչուհին հետամտել է, որ հունգար ընթերցողը վիպակն ընկալի որպես գեղարվեստական երկ, այլ ոչ թե հայ ազգագրությանը նվիրված մի աշխատություն: Եվրոպական գրականությամբ դաստիարակված թարգմանչի և բանասերի համար «Նահապետ» վիպակը խոր ու հարուստ գույճորությունների և նմանությունների մի ամբողջ շարք է առաջադրում՝ համադրելու համաշխարհային գրականության հետ: «Նահապետը», լինելով բնույթով բուն հայկական, միևնույն ժամանակ, պարունակում է համաշխարհային գրականությունից ծանոթ թեմաներ, համեմատություններ և խորհրդանիշների մի ամբողջ համակարգ: Նահապետի ողբերգությունը սկսվում է «մեղքից խուսափելու» պատմությամբ: Կայմակամի՝ հավատքին դավաճանելու առաջարկությունը զուգահեռներ ունի Ավետարանի թեմաների հետ: Նահապետը մերժում է կայմակամի առաջարկը և պետք է վտարվի դրախտից, անցնի սոսկալի փորձությունների ու տանջանքների միջով: Դրախտը կորցնելուց հետո կյանքը շարունակում է միայնակ, անապատում: Նահապետի համար Արագածի փեշերին ընկած այդ փոքր գյուղը իսկապես որ անապատ է՝ համեմատած իր նախկին բնակավայրի հետ: Սակայն այդ անապատը դրախտի է վերածում Նահապետը՝ երկար տարիների անխոնջ աշխատանքի շնորհիվ: Գիրքը պատասխան է տալիս մարդու կյանքի իմաստին վերաբերող հիմնական հարցին. այն հողը, որ մարդուն վիճակված է ճակատագրով, պետք է դրախտ դարձնել:

Նահապետը դուրս է գալիս իր մենությունից. զիջելով հարազատների խնդրանքին՝ Նուբարի հետ նոր կյանք է սկսում: Հետաքրքիր են վեպի և ֆիլմի՝ այս նույն թեման ներկայացնելու տարբերությունները: Ֆիլմում Նահապետի քարացած հոգին կյանք է վերադառնում, երբ նա լսում է իրենց առաջին զավակի առաջին ճիշդ: Վեպում շրջադարձային պահը տեղի է ունենում ճանապարհին, երբ Նահապետը իր տուն է տանում Նուբարին: Երբ տարածության մեջ նրանք մոտենում են իրենց ընդհանուր ապագա տանը, ժամանակի մեջ երկուսն էլ ճանապարհորդում են հետ՝ դեպի իրենց անցյալն ու վերջնականապես հրաժեշտ են տալիս այդ անցյալին ու իրենց վախճանված սիրելիներին, այդ կերպ փակում են անցյալի դուռը և նոր կյանք սկսում:

Գյոթեի «Ֆաուստի» ժամանակներից արդեն արևմտաեվրոպական գրականության մեջ հայտնի է կնոջ՝ կյանքում խաղացած դերի գերագույն կարևորությունը: Նուբարը մարմնավորում է հայ կնոջ լավագույն հատկությունները, որն իր բարությամբ, համեստությամբ, աշխատասիրությամբ ու սիրով կյանքի է կոչում Նահապետին: Նուբարի պատկերն իր կանացիությամբ մարմնավորում է հայ կնոջ իդեալը: Նրա օգնությամբ միայն կարող են իրականանալ Նահապետի տոհմի, սերնդի, ազգի շարունակությունը և գոյատևումը: «Նահապետ» վիպակը կարող է մեկնաբանվել նաև որպես հայրենի տունը գտնելու պատմություն: Երբ եղեռնը Նահապետին դուրս է մղում հարազատ գյուղից, նա կորցնում է նաև այն միջավայրը, որտեղ մինչ այդ ապրում էր: Նահապետը նոր կյանք պետք

է սկսեր Մուշից, Տարոնից, Սասունից եկած փախստականների հետ: Սկզբում նա իրեն

հեռու է պահում գյուղի բնակիչներից: Նահապետի համար իր նոր տունը հայրենի ու հարազատ է դառնում միայն այն օրվանից, երբ, շարունակելով հարազատ Արտամետի սովորույթը, խնձորի ծառ է տնկում իր բակում: Մեր օրերի եվրոպացին, որ հիմնականում քաղաքի բնակիչ է, ապրում է բնությունից կտրված: «Նահապետը» ընթերցողին մոտեցնում է այն բնական կյանքի ձևին, որ դեռ որոշ չափով պահպանվել է այսօրվա Հայաստանում:

Բնության նկարագրությունը ևս վիպական կարևոր դեր ունի: Այն ընդգծում և ուժեղացնում է հերոսների հոգեկան վիճակի նկարագրությունը: Ծառի թեման հաճախակի է կրկնվում այս ստեղծագործության մեջ: Նահապետը վիպակի սկզբում համեմատվում է վառված ու մոխրացած ծառի, իսկ վերջում՝ կայծակից մոխրացած, բայց վերստին կանաչող ծառի հետ: Խնձորը եվրոպական մշակույթում առասպելական, ավետարանական խորհրդանիշ է: Նահապետի համար խնձորի բուրմունքը, որն իր երիտասարդությունը, սերն ու ընտանիքն է հիշեցնում, երջանկության և լիության խորհրդանիշն է: Խնձոր-խորհրդանիշը հայտնվում է վիպակի համարյա յուրաքանչյուր կարևոր պահի: Նահապետը խնձորի բուրմունք է զգում, երբ Նուբարին առաջին անգամ իր նոր տուն է տանում, և նույն բուրմունքն է նրան ճանապարհում կյանքի վերջին պահերին:

Լինելով հայ ազգագրության մասնագետ և այդ թեմային նվիրված բազմաթիվ հոդվածների հեղինակ՝ թարգմանչուհին փորձել է հունգար ընթերցողին ծանոթացնել նաև հայ ազգագրությանը: Դրան է ծառայում վիպակի հավելվածում բերված բացատրական մասը: Իսկ գրքի վերջում գետեղված՝ հայոց ցեղասպանությանը վերաբերող բացատրական հոդվածը հունգար ընթերցողին տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի ապրած ողբերգության մասին:

Գիրքը երկլեզու տպագրություն է: Շապիկը զարդարված է Մարտիրոս Սարյանի բնապատկերներով: Գրքի հարուստ հավելվածում բերվում են Հրաչյա Քոչարի կենսագրությունը, Սուրեն Աբրահամյանի՝ «Նահապետ» վիպակի վերլուծականը և թարգմանչուհու հոդվածը հայոց ցեղասպանության մասին:

АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА НА ВЕНГЕРСКОМ ЯЗЫКЕ

(Повесть Грачья Кочара “Наапет”)

ДЖОТЯН-КРАЙЧИР П. (Венгрия, г. Будапешт)

Резюме

Переводы произведений армянских писателей на венгерский язык стали достоянием венгерской литературной общественности благодаря журналу “Армения”, издававшемуся в Трансильванской армянской колонии в 1887-1907 гг. На страницах этого журнала публиковались произведения М. Пешикташяна, Х. Абовяна, И. Ио-

аннисяна, А. Цатуряна, П. Дуряна, М. Налбандяна, Раффи, Саят-Нова и др. После Второй

мировой войны переводы произведений армянских писателей на венгерский язык в основном осуществлялись посредством русского языка в антологиях советской литературы.

В переводе венгерских поэтов были изданы поэтические произведения Ов. Туманяна, А. Исаакяна, Г. Эмина, Е. Чаренца. Отдельными сборниками на венгерском языке были изданы армянские народные сказки, переведенные с русского языка.

Венгерский перевод повести Гр. Кочара “Наапет”, осуществленный арменоведом-этнографом Пирошкой Джотян-Крайчир и удостоенный высокой оценки специалистов, расширил и углубил армяно-венгерские литературные связи.